

ԳԱՄՊԱՐՅԱՆ ԽՈՐԵՆ

* * *

Ես ելնում եմ գիշերը
Երբ հոգնած տներում
Ժնվում ու մեռնում են
Լույսերը
Երբ լսվում է շունչը
հոգեվարքում թայտացող
փողոցների
Երբ քամին երգում է լյա
մինոր

խոնջած ծառերի
լարերի վրա
Ես ելնում եմ գիշերը
ու համբուրում երազները
քնած մանուկների
Երբ դաշնամուրը սև
երգում է օ իմ սեր
ու տրոփում են
սիրտաստղերը
Երբիջնում է ցողը
մեռած երգչի երգի
նոտաների նման
ու շուրթերով տանուկ
ծաղիկներն են ժպտում
իրենց քնի մեջ խոր
Ես ելնում եմ գիշերը

* * *

Լուսնի թախիծը
ծորում է ծառերին
պոկվում ես ստվերից
և անգոսնում
պատկերը նրա
համառորեն
համառորեն
փորձում ես դիտել
անմեկին ցավի
մթին աչքերը
իսկ օդում
խոնավ
բույրեր են
և նենգ գեղեցկության
հետքերն աղի
խոսքերդ հղում ես

անհայտին

Տեր

ես չեմ ուզում արտասվել

անինաստ է դա

* * *

ինչուի շեղբը

մխրճվում է լռության

կոկորդը

և նրա արյունը սև

ծածկում է բոլոր

լուսամուտները

խլանում են սրտերը

լռության կաղկանձից

մութ է

նավակը քեզ է սպասում